

ԻՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ՂԱԶԱՐՅԱՆ

Գ Ր Ա Խ Ո Ս Ա Կ Ա Ն

ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ

ԳԻՐԲ ԵՐԿՐՈՐԿ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
1968

Գիրքը որ կու գա մեզի 317 էջերու վրա, տարակուս իսկ չկա, մնա պիտի իբրև պատմական վկայություն մը մեր՝ մասնավորաբար ախյուրքի հայ եկեղեցական դժբախտ ու բարեբախտ երևույթները բարացուցող:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գերագույն հոգեվոր խորհուրդը որքան գեղեցիկ, նույնքան արտառույզ գաղափարն է ունեցեր հրատարակելու **Վազգեն Ա. Հայրապետ Հայոցի երկրորդ հատորը**: Այս երկու ածականները ունայնորեն չէ որ մեր գրիչին ու մտածումին ներքև կիյնա: Գեղեցիկ՝ զի այդ էջերուն մեջ միշտ ընթերցողին աչքին ու մըտքին դիմացը կկանգնի՝ հայ եկեղեցին ու ազգը մարմնավորող լուսաթույր անձը, Լուսավորչի գահը ծառանգած՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն կաթողիկոսը և Ծայրագույն Պատրիարքը Ամենայն Հայոց. արտառույ՝ զի սև ու ճերմակին են ընդելուզված Վեհափառ Հայրապետի անձին որքան հեղույթունն ու ազնվագարն հոգին, նույնքան տառապող մեծ անձնավորությունը ի տես մեր եկեղեցիին անհիմաստ բայց ալետանջության մատնող ցավագին կացության:

Գիրքին մեջ երևցող 17 քառանյայտական կոնդակներու, 19 հայրապետական քարոզներու, 39 ճառերու ու Եպիսկոպոսապետի մը վայել ողջույնի սիրո խոսքերուն,

ու 7-ը նամակներու մեջեն կերևի ամբողջությամբ հայ ախյուրքի բարեբախտ ու ողբերգական լինելու չափ՝ դժբախտ երևույթներու պատկերը:

Առիթը:

Նորին Սուրբ Օծույթյան ծննդյան 60-ամյակն է ու գահակալության 14-րդ տարեդարձը:

Սա 14 տարիներու հարուստ ծաղկումին կերևի իրագործումներն ու նվաճումները՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի, տպարանին բացման ու եկեղեցիներու նորոգման: Ազգային-եկեղեցական դժբերու ու հաստատությանց տարեդարձները, ծննդյան ու զատական քարոզները, ընդհանուր քրիստոնեական եկեղեցվո նվիրապետական Աթոռներու գահակալներուն, եկեղեցական ու մշակութային կազմակերպությանց ուղղյալ միտքն ու ոգին շարժապատկերի մը նման կանցնին մեր մտքին ու սրտին աչքերուն դիմաց:

Սրտագին պարտականություն մըն է զոր կկատարենք, որդիական խորին ակնածությամբ ու ջերմագին սիրով, երբ համեստ փորձ մը կընենք այսպես ներկայացնելու մեր ամերիկահայ պատվական ժողովուրդին ու մտավորականության, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին միտքը, սիրտը ու գործը 14 տարիներու երկայնքին հասակ առնող:

Երբ մեր աչքերուն դիմաց տողանցեցին գիրքին բոլոր էջերը, մենք եկանք այն եզրակացության, որուն հասած էր վաղուց ի վեր նույնիմեք ամենուս սիրելի ու թանկագին Վազգեն Առաջին քառանյայտները՝

երբ Իր ընտրության ու օծման հաջորդող առաջին իսկ պահում Ան Իր շրթները բացավ ու արտասանեց բառ առ բառ, «Իմ միակ վարչագիտությունն՝ անկեղծությունն է եղած»։ Ոչ միայն գոհար բառ, այլ նաև ու մանավանդ, պայծառ **նկարագիր**։ Եթե Վեհին քառորդին չափ ալ անկեղծությունը բույն դրած լիներ ալ պատասխանատու հայ միտքերու ու սրտերու մեջ, կհավատանք թե մեր ազգին ու եկեղեցիին խնայվեին պիտի այն բոլոր ողբերգությունները, որոնց թաթին տակ ինկանք ու կտատապինք հն ի հն սա 14 տարիներու ընթացքին։

Ամեն հայ պարտավոր է, բայց մանավանդ մտավորական ու պատասխանատու ղեկավար մը, իր ազգային խղճմտանքեն ներշնչյալ մը, հրամայական է որ ման բերե ոչ այնքան իր հպանցիկ նայվածքը **Վազգեն Ա Հայրապետ Հայոց** գիրքին էջերուն այլ որքան ու ավելի իր լուրջ տրամաբանության աչքերը սկետելու է՝ որպեսզի գտնեն հոն, **Իրավը**։

Վեհափառ Հայրապետը պատմության իջնող այս գիրքին մեջ կերևի ոչ միայն իբրեկ շինարար Հայրապետ մը, այլ իբրև, և մանավանդ, **անկեղծ** միտք ու ջերմ սիրտ ունեցող Քահանայապետ մը։

Ահա նմուշ մը Իր այդ անկեղծ սրտեն ու մաքուր հայտի խղճմտանքեն. «Օտար ափերի վրա կենդանի պահեցեք Մեսրոպյան տառերի փառքը...»։ Եվ կամ՝ «Մենք զՄեզ զգացինք անապատի մը մեջ, Մեր սիրտը վիշտով լեցվեցավ։ Սիրտ ու միության Մեր կոչը կուղղենք նախ Անթիլիասի ներկա Աթոռակալին, Ջարեհ սիրեցյալ եղբորը Մեր, որմե տարիներ առաջ համբուրիվ բաժնվեցանք Մեր մեկնումի տխուր օրը, ուրախ օր մը վերստին ողջագործվելու քաղցր հույսով»։ Եվ կամ՝ «Մեր նահատակները մեռան ապրելու հույսով և հայ հայրենիքի վերածնունդի տեսիլքով»։ Ուրիշ մը՝ «Հայկական Բարեգործական ընդհանուր միությունը ծառայության և զոհաբերության ուխտ մըն է, որ ահա վեց տասնամյակներն ի վեր կը գործեն հայ ժողովուրդի ծոցին մեջ ամեն տեղ»։ Ուրիշ մը՝ «Համայն հայ հավատացյալ ժողովուրդը, առանց խաղության, հարազատ ժողովուրդն է Մայր Աթոռ ս. Էջմիածնի, երեկ և այսօր, միշտ և հավիտյան անկախ և վեր ամեն քաղաքական, ընկերային կամ այլ կարգի նկատումներն»։ Ասկե ավելի անկեղծ արտահայտություն ու իրավ հաստատում կարելի չէ սպասել։ Եվ հետևաբար խոնարհելու է ամեն մեկ հայ, Քահանայապետի հետևյալ հորդորին. «Հրավեր և հորդոր կկարդանք բոլորին որ

հեռու կենան Մայր Աթոռին և անոր սուրբ գործին քաղաքական բնույթ վերագրելն, փորձելով արդարացնել որոշ քաղաքական դիրքավորում սուրբ Էջմիածնի հանդեպ»։




ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՅ

ԳԻՐԶ ԵՐԿՐՈՐԴ

ԿՈՆԴԱՆԵՐ, ՔԱՐՈՋԵՐ,
ՃԱՌԵՐ, ԵԼՈՒՅՐԵՐ

Մայր Աթոռ ս. Էջմիածին
1968



Ձեռք կրնար հոս կենալ։ Մեր ընթերցողներու խղճի ու իրավ ՀԱՅՈՒ սրտին կքանդակենք Հայրապետի վերոհիշյալ արդար միտքերու շարունակությունը. — «ՄԵՆՔ ԳՐԻԾ ՁՈՒՆԻՆՔ», կպատգամե Վեհափառ Տերը, «և չենք ալ ուզեր ունենալ քաղաքական-ընկերային վարդապետությանց հակամարտությանց մեջ և կկամենանք նաև որ մեր հոգևորականները և արտասահմանի մեր ազգային-եկեղեցական իշխանությունները ՄԱԶԱՉԱՓ ԱՆԳԱՄ չհեռանան իրենց գուտ հոգևոր կոչումեն և նպատակներեն։ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՐՏԱՍԱՀ՝ ՄԱՆԻ ՄԵՋ Է՛, ԵՎ ՊԵՏՔ Է ՄՆԱ ԵԿԵՂԵՑԻ-ԺՈՂՈՎՈՒՐԴ»։ «Ձեր զավակներուն և թոռնիկներուն փոխանցեցեք մեր քրիստոնեական առաքինությունները, մեր հայկական ոգին, մայր հայրենիքի սերը»։ «ԾԱՆԻՐ ԶՔԵՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ»։

Վեհափառ Հայրապետին այս վերջին խոսքը չի՝ հիշեցնե՞ր մեզի մեր ոսկեդարու մատենագիրները, որոնք բյուզանդական իմաստասիրությամբ իրենց միտքն ու հոգին ճոխացուցին, ինչպես՝ Մովսես Խորենացին (կամ լավ ևս է ըսել պունեցի պատմահայր քերթողը), Եզնիկն ու Կորյունը, Եղիշեն ու Հովսեփ Պաղնացին ու Հովհան Եկեղեցացին:

Այս պայծառ ոգիով է որ Վեհափառ Հայրապետը ողջագործեցավ Խորեն Առաջին կաթողիկոսին հետ, Գալիլիացիի սուրբ քաղաքին մեջ, Գեթսեմանիի, Գողգոթայի ու Հարության խորհուրդներու Իմաստ շուքին ու շնորհին ներքև ու հայտարարեց՝ «Մենք Մեր եղբայրական պարտքը կհամարենք շնորհավորել Ձերդ Սրբության ընտրությունը և օծումը իբրև կաթողիկոս Տանն Կիլիկիո»։ «Երկու կաթողիկոսներս եղբայրաբար խոսքի նստինք իրարու հետ, և աշխատինք լուծել այն բոլոր հարցերը, որոնք կդրվին մեր առջև ի շինություն և ի հաստատություն մեր եկեղեցիին և ի մխիթարություն հայ ժողովուրդին»։ «ԿիսորՀինՔ Թե ԱՅՍ ՍԻՐՈ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ ԱՅԼԵՎՍ ԶԻ ԲԱԺՆՎԻՐ ՄԵԶՄԵ ԵՎ ԱՅՍ ԿԸՆԿԱՏԵՆՔ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԾՆՈՐՀ ՄԸ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ»։ «ԱՅՍԵՆՆ ՈՉ ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՈՉ ԱԼ ԽՈՐԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՐՑ ԿԱ; ԵԹԵ ԿՈՒԶԵՔ, ՈՉ

ԻՍԿ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՎ ԱՆԹԻՒԽԱՍԻ ՀԱՐՑ, ԱՅԼ ՄԵՐ ԱՄԲՈՂԶ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿԵՆՍԱԿԱՆ ԾԱՀԵՐՈՒՆ ՀԱՐՑ»:

«Մեկ բանի համար ԱՆԿԵՂԾՈՐԵՆ ԿԸՑԱՎԻՆՔ որ հաշտությունը հնարավոր չեղավ երջանկահիշատակ ԶԱՐԵՀ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ օրով: Առանձնապես Մեզի համար խոր վիշտ է այս, ափսոս...: Կիսնդրենք որ Ձեր վերադարձին սրբազան պարտք նկատեք «Հոգաց» կարդալ Մեր կողմե անոր հողակույտին վրա»:

Վազգեն Ա. Հայրապետ Հայոց երկրորդ գիրքի այս հրատարակության բոլոր էջերը նման են համրիչի մը, որուն աղամանդ քարերն են Վեհիկ մտքեն ու սրտեն փրթած բառերը և որոնց մեջեն, կանցնի հայ ժողովուրդի ԱՆԿԵՂԾՈՒԹՅԱՆ կարմիր թելը: Ու ի՞նչ սրտատույ է տեսնել որ այդ համրիչին ալ ծայրը կախված լինի խաչը՝ ստեղծողական սիրո:

Սիրով կթելադրենք բոլոր հայերուն անխըտիր, այս գիրքին ընթերցումը:

Կգնահատենք բարձրորեն նաև Ա. Հատիսյանը ու բոլոր նվիրյալ աշխատավորները այս գեղեցիկ և պատկերազարդ հրատարակության համար ու կապառենք երրորդ հատորին:

(«Հայաստանեայց եկեղեցի», 1969 թ., մայիս, էջ 149—151):

